

N.K. BAGHDASARYAN

CONFLICT MANAGEMENT TECHNOLOGIES

In the modern world, the role and importance of political conflict management and its features are especially important. Since the modern world, as it is said, is a collection of conflicts, their comprehensive management of which is a major problem. The problem mainly concerns constructive management, in which only the existence of a safe and harmonious world will be ensured.

Keywords: conflict management, conflict situation, conflict content, conflict resolution, forecasting, conflict solution.

ՀՏԴ 32(44) (479"25)

Ռ.Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՄԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1990-ԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Ուսումնասիրվել են Ֆրանսիայի Հանրապետության կողմից 1990-ականներից մինչև օրս պետական մակարդակով իրականացված այն քայլերը, դիվանագիտական կապերի զարգացումներն ու նախաձեռնությունները, որոնցում որդեգրվել է հայամետ ուղղվածություն: Շնորհիվ այս ամենի՝ հայ-ֆրանսիական բարեկամությունը խորացել և խորանում է, որն իր անմիջական ազդեցությունն է ունենում Ֆրանսիայի հայ համայնքի վրա՝ միայն դրական առումով:

Առանցքային բաներ. Պատրիկ Լաբոն, Շառլ Ազնավուր, Ֆրանսիայի հայոց թեմ, ֆրանսահայություն:

Ներածություն: 1991 թ. Հայաստանի անկախացումից և դրան հաջորդող տնտեսական ճգնաժամից հետո Ֆրանսիայում հայերի բնակչության թիվը կրկնապատկվեց՝ հասնելով մոտ 400.000-ի, որի հետևանքով Ֆրանսիան աշխարհում վերածվեց ամենամեծ և ամենաազդեցիկ հայկական համայնքը ունեցող երկրներից մեկի: Ֆրանսիայի Ազգային Ժողովը Հայոց ցեղասպանության մասին քննարկումներ անցկացրել է՝ սկսած 1990-ական թթ. կեսերից: Ճանաչման հիմնական աջակիցներից մեկը Պատրիկ Լաբոնն էր՝ «Ժողովրդական Շարժում և Միավորում» կուսակցության անդամներից: Լաբոնի ընտրատարածքը՝ Ռոն Ալպը, մեծ հայկական ընտրազանգված ունի և 1915 թ. ցեղասպանությունը վերապրածների ապրելավայրերից մեկն է եղել: 1994 թ. օգոստոսին Ֆրանսիայի արտգործնախարարի հետ խորհրդարանական քննարկման ժամանակ Լաբոնը մի շարք

բավական սուր հայտարարություններով հանդես եկավ Թուրքիայի մասին: Ակնարկելով Հայոց ցեղասպանության 80-ամյակը՝ նա իր ելույթում ասաց հետևյալը. «Մարդկության դեմ այս զագրելի հանցանքը, 20-րդ դարում այս առաջին ցեղասպանությունը դեռևս շարունակում է անպատիժ մնալ: Եկեք հիշենք, որ Թուրքիան, քաջալերվելով այս անպատժելիությունից, զավթել է հայկական տարածքները, ներխուժել և զավթել է Կիպրոսի մի մասը, բնաջնջում է քուրդ ժողովրդին» [1]:

Ֆրանսիայի հայամետ քաղաքականությունը, ՀՀ Դաշնակցության Ֆրանսիայի թևի գործունեությունը: Ֆրանսիայի դեպքում Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո ազգային շատ գործերի իրականացումն ու ստանձնումը ՀՀ դաշնակցության ուսերին էր: Այս կուսակցությունը և նրա քաղաքական թևը՝ Հայ դատի հետապնդման հանձնախումբը, Ֆրանսահայ համայնքի կյանքում հիմնական քաղաքական կազմակերպություններից մեկն էր, Ֆրանսիայի կառավարության հետ 1980-ականներին կարողացել էր հաստատել մոտ հարաբերություններ: Այս ամենը իր մեծ ազդեցությունն ունեցավ, որ Ֆրանսիայի Հանրապետությունը գնալով խորացնի իր հայամետ քաղաքականությունը: Մինչ օրս Դաշնակցության՝ Ֆրանսիայի թևն իրականացնում է հետևողական բազմակողմանի աշխատանքներ: Կուսակցությունը պարբերական շփումների մեջ է գտնվում Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության և Ֆրանսիայի կառավարական գործիչների հետ: Այդ ամենը հատկապես խորացավ ու իր լուրջ դերակատարումն ունեցավ՝ կապված Հայոց ցեղասպանության դատապարտման, ֆրանս-թուրքական հարաբերությունների, ֆրանսահայ համայնքի մշակութային, հասարակական, և քաղաքական կյանքի հարցերի հետ [2]:

Ցեղասպանության ճանաչման ամենաթեժ աջակիցների դերում հանդես եկան Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության անդամները: 1995 թ. Պոլ Մերսիերան բարձրացրեց այս հարցը խորհրդարանական քննարկման ժամանակ: Հատկանշական է, որ 1996 թ. Լուիս Հարիսի Ինստիտուտի անցկացրած հարցումներից մեկի համաձայն՝ պատասխանողների 69 տոկոսը գիտեր «Հայոց ցեղասպանության մասին, որը 1915 թ. Թուրքիայում հայ ժողովրդի դեմ իրականացված կոտորածն էր»: 1997թ. «Ժողովրդական Շարժում և Միավորում» կուսակցությունից Ռոլանդ Բլումը առաջարկեց, որ Ֆրանսիայի Ազգային Ժողովը օրենքով ընդունի Հայոց ցեղասպանությունը [3]:

1988 թ. սկսված Արցախյան շարժումը ընթացավ ազգային անկախության և ազատ զարգացման ուղիով: «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ազատ արձակելու հարցը մեծ արձագանքներ գտավ Ֆրանսիայում, որտեղ, «Ֆրանս-հայկական համերաշխություն» (Solidarite franco-armenienne) կազմակերպության

կոչով, Ֆրանսիայի 11 քաղաքներ զորավիզ կանգնեցին նրանց ազատագրությանը: Գրենուբլի, Լիոնի, Թուլուզի, Ստրասբուրգի, Մոնպելյեի, Փարիզի և ուրիշ քաղաքների քաղաքագլուխները, այդ թվում՝ նաև Ժակ Շիրակը, իրենց համերաշխությունը հայտնեցին կոմիտեի անդամներին: Հայերի նկատմամբ Ադրբեջանում գործադրված բռնությունների հարցը քննարկվեց նաև Եվրապառլամենտում: Արցախյան շարժման հետ կապված՝ Սփյուռքում համաժողովրդական պայմաններում խորացան ազգային անկախության գաղափարները, որը վերածնեց հայության հավաքական միտքը: Դրա վառ օրինակներից մեկը «Ֆրանս-հայկական համերաշխության» կողմից աջակցությունն էր ոչ միայն «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, այլ նաև իր զորակցության առաջադրումն էր Եվրոպայի մյուս հայ համայնքներին, որպեսզի նրանք Արցախի խնդրում ևս իրենց աջակցությունը բերեն [4]:

1990 թ., երբ Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան Գերագույն խորհրդի ընտրությունները, պաշտոնական բնույթ ստացան հայ-ֆրանսիական միջխորհրդարանական կապերը: Նույն թվականի սեպտեմբեր ամսին Ֆրանսիայի ազգային ժողովում ստեղծվեց Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական խումբը, որի նպատակն էր ուսումնասիրել երկկողմ հարաբերությունների հնարավոր զարգացման ուղիները և ոլորտները: 1996 թ. Շառլ Ազնավուրի ուղեցումը Հայաստան է գալիս Ֆրանսիայի Սենատի նախագահ Ռընե Մոնորին, ով հանդիպում է ՀՀ Ազգային ժողովի նախագահի հետ և հատուկ ելույթ ունենում Ազգային ժողովի դահլիճում [5]:

Արդեն 2000-2001 թթ. դրությունը որոշակիորեն փոխվում է, քանի որ հայ-ֆրանսիական հարաբերությունները, հատկապես ռազմական ոլորտում, ունենում են վերելք: 2001 թ. Ժակ Շիրակի միջնորդությամբ Փարիզում տեղի են ունենում Քոչարյան-Ալիև ինտենսիվ բանակցություններ, որոնք հակամարտության կարգավորման հույսեր էին ներշնչում: Ժամանակի ընթացքում հայ-ֆրանսիական ռազմական հարաբերությունների մեջ դինամիկան ավելանում է: 2003 թ. Սեպտեմբերին Ֆրանսիայի պաշտպանական գերատեսչությունը առաջարկում է ՀՀ պաշտպանության նախարարությանը ռազմական հումանիտար օգնություն տրամադրել՝ բժշկական պարագաների տեսքով: Հայկական կողմը դրական է արձագանքում՝ ներկայացնելով անհրաժեշտ բժշկական սարքավորումների ու պարագաների ցուցակ: Արդյունքում 2004թ. դեկտեմբերին Ֆրանսիայի կառավարությունը Հայաստանին է տրամադրում 1 միլիոն ԱՄՆ դոլարի արժողությամբ ռազմական, հումանիտար օգնություն, ինչը հնարավորություն է տալիս հայկական կողմին համապատասխան խնայողություններ կատարել՝ ռազմաբժշկական պարագաների ձեռքբերման հարցում [6]:

Անկախության տարիներին Ֆրանսիայի հայոց թեմի և Էջմիածնի Մայր աթոռի միջև պաշտոնական հանդիպումներն և ներկայացուցչական տարբեր ժողովները, բնականաբար, ավելի շատ և առավել փոխհամաձայնեցված մթնոլորտում շարունակվեցին [7]:

Եզրակացություն: Ֆրանսիայի Հանրապետությունը կողմնակից է, որ իր երկրում հայերը գրավեն առաջատար դիրքեր արդյունաբերության և այլ ոլորտներում, քանի որ այսօր այնտեղ մեծ վտանգ կա՝ կապված մուսուլմանների հետ, որոնք փորձում են գրավել առաջատար դիրքեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. National Assembly of France, Hearing on the Armenian Genocide. - August 8, 1994.
2. «Դպրություն», 14 սեպտեմբեր, 1990:
3. **Claude Mutafian**, Le génocide des Arméniens. Un modèle de nettoyage ethnique. Autumn, 1996.
4. «Հառաջ», Փարիզ, 10 մարտ, 1989:
5. **Մալխասյան Ց.Ա.** Հայաստանի և Ֆրանսիայի պետական կառույցների փոխհարաբերությունները միջպետական համագործակցության զարգացման համատեքստում // «Կանթեղ». Գիտական հոդվածների ժողովածու.- 2013.- N 3.- էջ 137-146:
6. **Բաղդասարյան Տ.** Հայ-Ֆրանսիական համագործակցությունը ռազմական ոլորտում (1993-2013 թթ.) // «Կանթեղ». Գիտական հոդվածների ժողովածու.- Երևան, 2014.- N 1.- էջ 42-51:
7. **Torossian Kégham**. Historique du Diocèse de France de l'Église Apostolique Arménienne.- Juin. 2015, <https://www.diocesearmenien.fr/histoire-de-la-diocese>

Ր.Վ. САРГСЯН

ПРОАРМЯНСКАЯ ПОЛИТИКА, РЕАЛИЗИРУЕМАЯ ФРАНЦУЗСКОЙ РЕСПУБЛИКОЙ НА ГОСУДАРСТВЕННОМ УРОВНЕ С 1990-Х ГОДОВ ПО НАСТОЯЩЕЕ ВРЕМЯ

Рассматриваются шаги, предпринятые Французской Республикой на государственном уровне с 1990-х годов по настоящее время, развитие дипломатических отношений и инициативы, принявшие проармянскую направленность. Благодаря этому армяно-французская дружба углубляется, оказывая непосредственное влияние на армянскую общину Франции, естественно только в положительном ключе.

Ключевые слова: Патрик Лабонн, Шарль Азнавур, Армянская епархия Франции, армяне Франции.

R.V. SARGSYAN

**THE PRO-ARMENIAN POLICY IMPLEMENTED BY THE FRENCH
REPUBLIC AT THE STATE LEVEL FROM THE 1990S TO THE
PRESENT DAY**

The article discusses the steps taken by the French Republic at the state level from the 1990s until now, the developments of diplomatic relations and the initiatives adopted in a pro-Armenian orientation. Thanks to this, the Armenian-French friendship is deepening, which has its direct impact on the Armenian community in France, naturally only in a positive way.

Keywords: Patrick Labonne, Charles Aznavour, Armenian Diocese of France, Armenians of France.

ՀՏԴ 303.1: 371.217 (479.25)

Ս.Գ. ՄԱՆԹԱՇՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՔՈԼԵՋՆԵՐՈՒՄ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՍՆՆԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻՑ**

Դիտարկվում է ՀՀ դպրոցներում և քոլեջներում սովորողների շրջանում սննդի վերաբերյալ հեղինակի անմիջական մասնակցությամբ անցկացված սոցիոլոգիական հետազոտության փորձը:

Առանցքային բառեր. սննդակարգի՝ մշակույթ, փորձառություն, պրակտիկաներ և նախասիրություններ, կայուն դպրոցական սնունդ, CATI ծրագիր, SPSS ծրագիր:

«Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրում Երևան քաղաքի դպրոցներն ընդգրկելուն, այսինքն՝ Երևան քաղաքի դպրոցահասակ երեխաների՝ դպրոցում կայուն սնունդ ապահովելուն ուղղված բաղադրիչի **նպատակն է հանրակրթական հաստատություններում աշակերտներին ապահովել հավասարակշռված, անվրանգ և բարձրորակ տաք սննդով, բարելավել երեխաների առողջությունը, ցուցաբերել աջակցություն սոցիալապես անապահով բնակչությանը, ուստիև՝ բարձրացնել երեխաների ընդգրկվածության աստիճանը դպրոցում կրթության գործընթացին՝ բարելավելով կրթության որակը:**

Տեղեկատվության բացակայության պատճառով «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի պատվերով իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն: